ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ _____ 2022 թվականի № -Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի №273Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի «Հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջները, դրանց մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №273Ա որոշման՝

1) №1 հավելվածի 2-րդ կետից հանել «, №0447» թիվը.
2) №2 հավելվածի՝

   ա. 6-րդ կետի 3-րդ ենթակետում «գնման» բառից առաջ լրացնել «մրցակցային ընթացակարգերով» բառերը, իսկ «հայտարարությունները» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով,» բառերը.

   բ. 6-րդ կետի 4-րդ ենթակետում «կնքված» բառից առաջ լրացնել «մրցակցային ընթացակարգերով գնման գործընթացի կազմակերպման արդյունքում» բառերը

և հանել «, որոնցով իրականացված գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը (մեկ մլն դրամը)» բառերը.

գ. 20-րդ կետի 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

դ. 20-րդ կետի 7-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ ենթակետով.

«8) գնման գինը չի գերազանցում՝

ա. 6 միլիոն դրամը, եթե հանրային կազմակերպության ընթացիկ տարվա սակագնով նախատեսված տարեկան հասույթը չի գերազանցում 10 միլիարդ դրամը՝ առանց ԱԱՀ-ի.

բ. 20 միլիոն դրամը՝ եթե հանրային կազմակերպության ընթացիկ տարվա սակագնով նախատեսված տարեկան հասույթը չի գերազանցում 50 միլիարդ դրամը՝ առանց ԱԱՀ-ի.

գ. 50 միլիոն դրամը՝ եթե հանրային կազմակերպության ընթացիկ տարվա սակագնով նախատեսված տարեկան հասույթը 50 միլիարդ դրամից ավելի է՝ առանց ԱԱՀ-ի:».

ե. 33-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) №3 հավելվածի՝

ա. 5-րդ կետում «ֆորմատներով» բառից հետո լրացնել «՝ հանրային կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ:» բառերը.

բ. 2-րդ կետով հաստատված հավելվածի Գ-1 ձևի 10-11, 12-13, 19-20 և 22-23 սյունակներում «(հազար միավոր)» բառերից առաջ լրացնել «առանց ԱԱՀ-ի» բառերը:

2. Հանրային կազմակերպություններին՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը իրենց հաստատած գնումների կարգերը համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին՝ այդ մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
_____ի 2022թ.